# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2014 թվականի N 774-Ն

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների ընդունման, հաշվառման, տեղաբաշխման, ժամանակավոր կացարաններով, կենսագործունեության և բժշկական ապահովման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների կացարաններում կազմակերպվող բուժկետում անհրաժեշտ իրերի ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. օգոստոսի 7
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 10-ի N 774 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ռազմական գործողությունների և արտակարգ իրավիճակների հետևանքով զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների ընդունման, հաշվառման, ժամանակավոր տեղաբաշխման, կենսագործունեության և բժշկական ապահովման կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) զանգվածային տեղաշարժված բնակչություն՝ ռազմական գործողությունների, արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ ծագման հետևանքով Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող և (կամ) Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձանց և (կամ) փախստականների հարկադրված տեղաշարժն է իրենց մշտական կամ ժամանակավոր բնակության վայրերից.

2) զանգվածային տեղաշարժված բնակչության կենսագործունեության ապահովում՝ միջոցառումների համալիր՝ ուղղված արտակարգ իրավիճակների գոտիներում, բնակչության զանգվածային տեղաշարժի երթուղիներում և տեղաբաշխման վայրերում մարդկանց կյանքի և առողջության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և պահպանմանն արտակարգ իրավիճակների պայմանների համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշմամբ սահմանված նորմերին և նորմատիվներին համապատասխան.

3) զանգվածային տեղաշարժված բնակչության բժշկական ապահովում՝ առողջապահության մարմինների կողմից իրականացված կազմակերպչական, բուժական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների համալիր՝ ուղղված զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների առողջության ապահովմանը, զանգվածային տեղաշարժի ընթացքում վնասվածքներ ստացողներին և հիվանդներին ժամանակին բշժկական օգնության ցուցաբերմանը, ինչպես նաև զանգվածային ինֆեկցիոն հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը.

4) տեղաբաշխում՝ բնակչության տեղավորումն է տարածքի որոշակի վայրերում, որոնք ունեն մարդկանց կյանքի և գործունեության համար անհրաժեշտ շենքեր ու շինություններ.

5) ժամանակավոր կացարան՝ զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների կենսաապահովման, տեղակայման համար նախատեսված բնակելի օբյեկտ (տարածք).

6) ընդունման հավաքակայան՝ հավաքատեղի, որտեղ կատարվում են զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների ընդունումը, հաշվառումը և բաշխումը՝ ըստ ժամանակավոր կացարանների.

7) տարահանման հանձնաժողով՝ նշանակված կազմ, որը կազմակերպում ու ղեկավարում է տվյալ տարածքի բնակչության, այդ թվում՝ փախստականների զանգվածային տեղաշարժի միջոցառումները.

8) բնակչության զանգվածային տեղաշարժ՝ արտակարգ իրավիճակներում վտանգավոր տարածքներից բնակչության, այդ թվում՝ փախստականների կազմակերպված տեղաշարժ (դուրսբերում) և ժամանակավոր տեղաբաշխում՝ կենսաապահովման համար նախապես պատրաստված անվտանգ տարածքներում:

3. Բնակչության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող փախստականների զանգվածային տեղաշարժն իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների

առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ։

4. Անօթևան բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումների լիարժեք իրականացման նպատակով ստեղծվում են ժամանակավոր կացարաններ, որտեղ հնարավոր է բնակչության համակողմանի կենսագործունեության ապահովումը:

5. Բնակավայրում կարող է ստեղծվել մեկ կամ ավելի ժամանակավոր կացարաններ, հնարավոր առավելագույն թվով մարդկանց սպասարկման սկզբունքով: Ժամանակավոր կացարանների համար կարող են օգտագործվել կինոթատրոնները, ակումբները, ուսումնական հաստատությունները, հյուրանոցները, հանրակացարանները, առողջարանները, նախաբուժարանները, հանգստյան տները, տուրիստական բազաները և այլ շինություններ (անկախ սեփականության ձևից), ինչպես նաև վրանային ավանները, իսկ անհրաժեշտ գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ, վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի պահանջների:

6. Ժամանակավոր կացարանները ընտրվում են նախօրոք՝ ելնելով արտակարգ իրավիճակների ժամանակ առաջացող հնարավոր իրավիճակներից՝ զանգվածային տեղաշարժված բնակչության համար անհրաժեշտ կոմունալ-կենցաղային պայմանների ապահովման սկզբունքով:

7. Ժամանակավոր կացարանները գործում են մինչև զանգվածային տեղաշարժված բնակչությանը մշտական բնակության վայրերով ապահովումը:

## II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

8. Բնակչությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործած անձինք և (կամ) փախստականները, կարող են տեղաշարժվել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով, երկաթուղային շարժակազմերով և ջրային տրանսպորտով:

9. Այն դեպքերում, երբ զանգվածային տեղաշարժի համար ճանապարհները դժվար անցանելի կամ անանցանելի են, կարող են օգտագործվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

10. Զանգվածային տեղաշարժի համար տրամադրվող տրանսպորտային միջոց-ների հատկացումն ու վառելիքաքսուքային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## III. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

11. Արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձանց և (կամ) փախստականների զանգվածային տեղա-շարժի մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

12. Արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության, այդ թվում՝ փախստա-կանների զանգվածային տեղաշարժի մասին որոշում են ընդունում հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները՝ իրենց համակարգի աշխատողների համար, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, համայնքի ղեկավարները՝ համայնքի բնակչության համար և կազմակերպությունների ղեկավարները՝ կազմակերպության աշխատողների համար, իսկ նրանց բացակայության դեպքում՝ Հայաս-տանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նրանց փոխարինող անձինք: Որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է որոշումից բխող միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն լիազորված մարմնին՝ Հայաս-

տանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն (ճգնաժամային կառավարման կենտրոնին):

13. Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման աշխատանքների ղեկավարը՝ յուրաքանչյուրն իր մասով (հանրապետական գործադիր մարմնի, տարածքային կառավարման մարմնի, համայնքի և կազմակերպության ղեկավարը) իրավունք ունի ինքնուրույն որոշում ընդունելու վտանգավոր տարածքից բնակչությանն անվտանգ վայր տեղափոխելու վերաբերյալ:

## IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

14. Բնակչության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձանց և (կամ) փախստականների զանգվածային տեղաշարժի կազմակերպումը, տեղաշարժված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսապահովումն իրականացնում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

15. Տարահանման հանձնաժողովները նախապես որոշում և զանգվածային տեղաշարժի միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են զանգվածային տեղաշարժն իրականացնող մարմինների, տարահանման և ընդունման հավաքակայանների, ժամանակավոր կացարանների գտնվելու վայրի մասին: Տեղի բնակչությունն ստեղծված իրավիճակի վերաբերյալ տեղեկացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1925-Ն որոշման:

16. Տարահանման հանձնաժողովներն ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ սահմանված կարգով:

17. Զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների, Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու հավանական բոլոր անցակետերում Հա-

յաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքը թույլատրող լիազոր մարմինը կազմակերպում է ծառայություն, առանձնացնում է աշխատող (աշխատողներ)՝ նշված անձանց հաշվառման (ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների ճշգրտման, սոցիալական վիճակի հստակեցման) իրականացման, տեղեկատվության ամփոփման և Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմիններ փոխանցման համար:

18. Զանգվածային տեղաշարժված բնակչությանը սահմանային կետերից դեպի Հայաստանի Հանրապետության բնակավայրեր տեղափոխելու համար տրամադրվում են տրանսպորտային միջոցներ:

## V. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

19. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուժերն իրականացնում են զանգվածային տեղաշարժի երթուղիների անցանելիության և տարահանված բնակավայրերում (տարածքներում) ու օբյեկտներում մնացած գույքի պահպանության միջոցառումները:

20. Զանգվածային տեղաշարժի միջոցառումների ապահովումն իրականացվում է հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության ծառայությունների միջոցով:

21. Զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների կենսաապահովումը տեղաբաշխման տեղամասերում իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշման:

22. Զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների բժշկական ապահովումը ներառում է առողջապահական կազմակերպությունների կողմից

անցկացվող կազմակերպական, բուժական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ:

23. Բժշկական ապահովման միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և այլ պետական մարմինների ենթակայության տակ գտնվող բուժհիմնարկների ուժերով և միջոցներով:

24. Բնակչության տարահանման (ընդունման) հավաքակայաններում, ժամանակավոր կացարաններում, զանգվածային տեղաշարժի երթուղիներում տեղաշարժվածների բուժօգնությունն իրականացվում է բժշկական կազմակերպությունների կողմից՝ անկախ սեփականության ձևից, սեփական միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հետագա համարժեք փոխհատուցմամբ՝ «Բնակչության բժշական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Տարահանված բժշկական հիմնարկները տեղաբաշխվում են համաձայն իրենց պլանների:

26. Զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների բժշկական ապահովումը, իրականացվում է հետևյալ սկզբունքներով՝

1) հարկադիր տեղաշարժվածները ժամանակավորապես կենտրոնացվում են ոչ մեծ կացարաններում կամ բնակավայրերին հարակից տարածքներում.

2) հարկադիր տեղաշարժվածները տեղաբաշխվում են տվյալ մարզի անվտանգ տարածքներում.

3) հարկադիր տեղաշարժվածների բժշկական ապահովումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել ժամանակավոր կացարաններում բժշկական կետեր՝ առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով՝ օգտագործելով տվյալ տարածաշրջանի գործող բժշկական կազմակերպությունների բազային հնարավորությունները: Կացարաններում կազմակերպվող բժշկական կետերը պետք է ապահովվեն

անհրաժեշտ դեղամիջոցներով, բժշկական գույքով և սարքավորումներով: Կազմակերպվող բուժկետերը (բնակչության 3000-3500 թվի հաշվարկով) համալրվում են հետևյալ անձնակազմով՝ վիրաբույժ, թերապևտ, մանկաբույժ, մանկաբարձ-գինեկոլոգ, ատամնաբույժ, հոգեթերապևտ: Անհրաժեշտության դեպքում, կարող են ներգրավվել մոտակա բնակավայրից ընտանեկան բժիշկ, բուժքույրեր, սանիտարահակահամաճարակային անվտանգությունն ապահովելու համար կացարաններում նախատեսվում է նաև շարժական հակահամաճարակային խումբ, որի կազմում ընդգրկվում է բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-համաճարակաբանի օգնական: Առանձին դեպքերում նրանց կազմում կարող են ընդգրկվել բժիշկ-հիգիենիստ, բժիշկ-վարակաբան, լաբորանտներ.

4) կացարաններում բուժկետերի համար նախատեսվում են 4-5 վրան, որոնցից 2-ը օգտագործվում է որպես լազարեթ.

5) բուժկետերում շաբաթական 1-2 անգամ հրավիրվում են հիվանդանոցների բժիշկ մասնագետներ, որոնց հիմնական նպատակը կլինի կոնսուլտացիաների միջոցով հայտնաբերել հիվանդների, որոնք կուղարկվեն ստացիոնար հետազոտման և բուժման հիվանդանոցներում կամ այլ բուժկանխարգելիչ կազմակերպություններ.

6) ստացիոնար բուժման կարիք ունեցող անձանց տեղափոխում են տվյալ մարզի, տարածաշրջանի բուժկազմակերպություն, որտեղ տեղաբաշխված է կացարանը.

7) հարկադիր տեղաշարժվածների բնակության տարածքը պետք է ապահովված լինի բնակչության համար անհրաժեշտ կենսապայմաններով և համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա. ունենա գրունտային ջրերի ցածր քանակություն (աստիճան),

բ. արևային լավ լուսավորվածություն և օդափոխության հնարավորություն,

գ. կացարանը տեղակայվի հնարավորինս սննդային և ջրային աղբյուրների մոտակայքում, հոսանքի և ջեռուցման անցկացման ուղիների մոտ,

դ. կացարանը պետք է տեղակայվի վարակիչ հիվանդությունների բնական օջախներից դուրս, որտեղ մեծ են համաճարակային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ռիսկերը, ինչպես նաև հնարավոր սահքերը, սելավները, ձնահոսքի վտանգը, խմելու ջրի սանիտարական պահպանման գոտիներից դուրս, հրաձգարաններից, արտադրական թափոնների գերեզմանոցներից դուրս.

8) ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ՝ զանգվածային տեղաշարժված բնակչության շրջանում վարակները կանխելու համար: Անհրաժեշտության դեպքում, զանգվածային տեղաշարժված բնակչության համար կազմակերպվող կացարաններում և բնակատեղիներում ստեղծվում են շարժական սանիտարական մշակման կետեր, իսկ դեղորայքային սպասարկումն իրականացվում է արտակարգ իրավիճակներում գործող կանոններով՝ օգտագործելով նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության բուժգույքի պահուստային հնարավորությունը.

9) զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների այն մասը, ովքեր բնակություն կհաստատեն բարեկամների մոտ կամ բնակավայրերի հանրակացարաններում, նրանց բուժսպասարկումն իրականացվում է ըստ տարածքային պոլիկլինիկաների կամ բուժկազմակերպությունների:

27. Զանգվածային տեղաշարժված բնակչության, այդ թվում՝ փախստականների կացարաններում կազմակերպվող բուժկետերի քանակը պայմանավորվում է կենտրոնացման վայրի բնակչության թվով: Ներկայացված բուժկետի նորմատիվները հաշվարկված են 3000-3500 բնակչի համար և ներառում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 774 - Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկում նախատեսված իրերը:

28. Զանգվածային տեղաշարժերի ժամանակ յուրաքանչյուր 1000 բնակչի կարող են ուղեկցել 1 սանիտարական մեքենա, 2-3 բժիշկ և 5-6 բուժքույր մինչև ժամանակավոր կացարան, որտեղ կազմակերպվում են բուժկետեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 10-ի N 774 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԲՈՒԺԿԵՏՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԻ

| NN ը/կ | Անվանումը | Չափի միավորը | Քանակը |
|---|---|---|---|
| 1. | Անհետաձգելի բուժօգնության պահարան | հատ | 1 |
| 2. | Հավաքածու՝ բուժկետից դուրս (ճամպրուկ) անհետա-ձգելի բուժօգնություն ցուցաբերելու համար | հավաքածու | 1 |
| 3. | Դեղամիջոցների պահպանման պահարան | հատ | 1 |
| 4. | Անհատական շնչառության սարք (պոլինարկոն) | հատ | 1 |
| 5. | Թթվածնի տարողություն՝ 40 լ ռեդուկտորով, բանալիով և խոնավացած թթվածնի ներարկման համակարգով | հավաքածու | 1 |
| 6. | Ճնշաչափ՝ զարկերակային ճնշման չափման համար (տոնոմետր) | հատ | 1 |
| 7. | Ֆոնենդոսկոպ | հատ | 1 |
| 8. | Մկրատ՝ կոճակով վիրակապերը կտրելու համար | հատ | 1 |
| 9. | Մանրէազերծիչ (ստերիլիզատոր)՝ փոքր, միջին, մեծ | հատ | 1 |
| 10. | Մանրէազերծված միանգամյա ներարկիչ, ներարկիչ՝ ինսուլինային, ներարկիչ՝ 2.5, 10, 20 մլ | հատ<br>հատ | 100<br>100<br>100 |
| 11. | Ինյեկցիոն ասեղներ՝ միանգամյա ներարկիչների համար | հատ | 10 |
| 12. | Տակառաձև թաս | հատ | 1 |
| 13. | Բժշկական ջերմաչափ | հատ | 5 |
| 14. | Հիվանդների զննման բժշկական բազմոց | հատ | 1 |
| 15. | Էլեկտրական ջեռուցիչ | հատ | 1 |
| 16. | Հիվանդի մահճակալ | հատ | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | Սառնարան | հատ | 1 |
| 18. | Վիրակապական գործիքների հավաքածու | հատ | 1 |
| 19. | Մանրէազերծող, չորացնող պահարան | հատ | 1 |
| 20. | Վիրակապական սեղան | հատ | 1 |
| 21. | Սանիտարական մեքենա | հատ | 1 |
| 22. | Վերին և ստորին վերջույթների անշարժացման շինաների (բիզ) հավաքածու | հավաքածու | 2 |
| 23. | Դեղեր | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ